

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

## ՀՀ Լոռու մարզպետի մոտ առողջապահական հարցերով կայացած խորհրդակցության

04.05.2017թ.

ք.Վանաձոր

### Մասնակցում էին

Ս. Լամբարյանը - ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ,

Հ. Պապոյանը - ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ,

ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի աշխատակիցները և առողջապահական ընկերությունների տնօրենները:

### Օր ա կ ա ր գ ու մ`

1. ՀՀ Լոռու մարզի առողջապահական ընկերությունների ֆինանսա-տնտեսական գործունեության վերլուծականի քննարկում  
/ Ձեկ. Հ. Պապոյան/
2. ՀՀ վարչապետի հանձնարարականի ներկայացում  
/ Ձեկ. Ս.Լամբարյան/
3. Էլեկտրոնային առողջապահական համակարգի (E-Health) ներդրման խնդիրների մասին  
/ Ձեկ. Ս.Լամբարյան/
4. Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող «Ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման» շրջանակներում իրականացվող սկրինինգային հետազոտությունների մասին  
/ Ձեկ. Ս.Լամբարյան/
5. Իմունականխարգելման գործընթացի 2017 թվականի I եռամսյակի վերլուծված արդյունքների ներկայացում:  
/Ձեկ.Ռ. Պողոսյան/
6. ԲՍՓՀ ուղեգրումների մասին
7. ՀՀ Լոռու մարզի առողջապահական հաստատությունների շենքերի սանիտարահիգիենկ վիճակի, աշխատակիցների կարգապահության հետ առնչվող և ընթացիք հարցեր:

Խորհրդակցության ժամանակ տրված հանձնարարականներ և առաջարկներ.

Օրակարգի առաջին հարցի՝ ՀՀ Լոռու մարզի առողջապահական ընկերությունների ֆինանսա-տնտեսական գործունեության վերաբերյալ տեղեկատվություն ներկայացրեց ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Հրայր Պապոյանը: Վերլուծելով ֆինանսական ցուցանիշները, մարզի ղեկավարը հանձնարարեց տնօրեններին՝ ուշադրության կենտրոնում պահել պետական բյուջե շահութաբաժինների փոխանցման գործընթացը և ապահովել վճարովի հիմունքներով և համավճարային սկզբունքով իրականացվող ծառայությունների բարելավումը:

ՀՀ վարչապետի հանձնարարականի վերաբերյալ առողջապահական ընկերությունների ղեկավարներին առաջարկվեց ուսումնասիրել և 7-օրյա ժամկետում ներկայացնել այնպիսի ծրագիր, որը կներառի կազմակերպությունների գործունեության գնահատում ոչ միայն ֆինանսական ցուցանիշների, այլ նաև հիմնական կատարողական արդյունքների (որակական ցուցանիշների):

Միասնական էլեկտրոնային առողջապահական համակարգի ներդրման մասին տեղեկատվություն տրամադրեց ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Ս. Լամբարյանը: Ընդգծելով, որ այդ համակարգի ներդրումը մարզի առողջապահության ապագան է, մարզի ղեկավարը հանձնարարեց համակարգում առկա խնդիրների վերացման ուղղությամբ ձեռնարկել համապատասխան միջոցառումներ և պատշաճ մակարդակով ապահովել ծրագրի իրականացման գործընթացը:

Քննարկվեցին նաև Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող «Ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման» շրջանակներում իրականացվող սկրինինգային հետազոտությունների և իմունականխարգելման գործընթացի 2017 թվականի I եռամսյակի վերլուծված արդյունքները: Հանձնարարվեց՝ ոչ լիարժեք ընդգրկվածություն ապահոված բժշկական հաստատությունների տնօրեններին՝ սահմանել խիստ հսկողություն և ապահովել վերոնշյալ ցուցանիշների բարելավումը:

ԲՄՓՀ ուղեգրումների վերաբերյալ հանձնարարվեց առաջնորդվել ներկայումս գործող կարգով և սահմանված նորմատիվներով և ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ՝ կոռուպցիոն ռիսկերը բացառելու նպատակով:

Քննարկվեցին նաև առողջապահական ընկերությունների աշխատակիցների աշխատանքային կարգապահության, ինչպես նաև շենքերի սանիտարահիգիենիկ վիճակին առնչվող և մի շարք այլ հարցեր: Մարզպետը հանձնարարեց կարգապահությունը և սանիտարական վիճակը բերել բավարար մակարդակի:

Մ Ա Ր Զ Պ Ե Տ



Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Արձանագրեց՝ Ռ. Պողոսյանը